

Կ'երեւի թէ Տէր Կոստանեանց՝ զրա-
դած Մագիստրոսի միտքերուն ծանօթու-
թիւններ զնելու, կը մոռնայ իր կարծիք-
ներուն ալ ծանօթութիւնները զնել:

*
**

Byzantinische Zeitschrift փրկան-
դագիտութեան նուիրուած թերթը, կը հրա-
տարակէ Ֆրանսերէն լեզուով ընդարձակ
յօդուած մը Ս. Սահակի տեսիլքին վրայ՝
որ կը գտնուի Ղազար Փարպեցիի պատմու-
թեան մէջ: Թողածը կը կրէ. Un docu-
ment arménien de la généalogie de
Basile I^{er} տիտղոսը: Մեծանուն յօդուա-
ծագիրը, Հ. Կ. Տէր-Սահակեան, յօդուա-
ներու նոխութեամբ մը և դէպքերու անհրա-

ժեշտութեամբ կը ցուցնէ թէ Տեսիլքը Ինչ
աստիճան յունական ծագումն ունի, և ինչ
աղերս մանաւանդ վասիլ Ա.ի անձին ու
շրջանին հետ: Նա կը թողու կասկածել
միանգամայն որ տեսիլքը թելադրուած ըլ-
լայ վաճան՝ Տարօնի եպիսկոպոսէն: Աւելի
նշողած, ընդարձակած ու հիմնաւորած է այն
տեսութիւնները զորս պարզած էր արդէն
Բազմավէպի մէջ:

*
**

Անահիտի մէջ Պ. Չօպանեան մեզի կու
տայ թարգմանութիւն մը թէոֆիլի կոթիէէ.
Համաստանածեան սիրատւաց:

Պ. Չօպանեան ուրիշ անգամ ալ մեզի
տուած էր նոյն հեղինակէն չքնաղ կտոր
մը: Ու այս անգամ ալ յաջողած է հա-
յերէն լեզուի օտարութիւնը պատշանեցնել
կոթիէի յստակ ու ոսկեզօծ հոգւոյն:

1. Տես Բազմ. 1905 էջ 28-32 և 134-140
2. Տես Բազմ. 1905 էջ 574.

Ք Ա Ա Ն Գ Ա Կ Ո Թ Ե Թ Ն

	Էջ		Էջ
Կացութիւնները	1	ՏԵՐ - ՍԱՀԱԿԵԱՆ Հ. Կ. — Հայերը	
ՎԻԿՏՈՐԻԱ ԱՂԱՆՈՒՐ. — Ինքնաշարժ		Բիւզանդական մատենագրութեան մէջ. 16	
Կառքին մէջ. թրգմ. Ղազիկեան Հ. Ա. 3		ՎԻԿՏՈՐԻԱ ԱՂԱՆՈՒՐ. — Ծնած տունս	
Հանգիստ Նորին Վեհափառութեան		Թրգմ. Ղազիկեան Հ. Ա.	23
Մատթէոս Բ. Իզմիրեան Կաթողիկոսին. 4		ՀՈՄԵՐ. — Իլիական. Թրգմ. Ղազի-	
ԱՆԴՐԻԿԵԱՆ Հ. Ն. — Լէօ	6	կեան Հ. Ա.	24
ՏԻՐՈՅԵԱՆ Հ. Ա. — Համաշխարհա-		Դ. ՎԻԻԲԼԵԻՍԷԻԼԻ. — Գիտալա. Թրգմ.	
կան լեզու.	9	Ատո. Բէկ-Յովսէփեան	31
ՇԻԼԼԵՐ. — Ողբ Կերէսի. Թրգմ. Մ.		ԱՆԴՐԻԿԵԱՆ Հ. Ն. — Լէիլա	35
Ա. ՄԵԼԵՐՆ	13	***. — Աւագանին խորը.	39
Հունգարահայ պատգամաւորութիւնը . 14		Գիրքեր ու թերթեր	40

Վրիպակ. — Բազմավէպ 1910 էջ 570, սխալ երկրորդ, սող. երկրորդ
վերէն, Սուրբախ ուղղելու է Ախեյն: